ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Կանանց աստուածաբանական ճեմարան։ Ս. Սինոդը թույլ է տուել Մոսկուայում բաց անել աստուածաբանական ինստիտուտ (ճեմարան)։ Ինչպես հաղորդում է Ռուսաց «Եկեղեցական Համբաւաբեր» թերթը, այդ ճեմարանի պահանջը վաղուց զգալի է և սկզբունքային տեսակէտից էլ կանանց բարձրագոյն հոգևոր դպրոցի գոյութիւնն միանգամայն ցանկալի։ Ռուսաստանում գոյութիւն ունի մի քանի տասնեակ կանանց հոգևոր թեմական դպրոցներ, և մինչև այժմ չկայ այդ դպրոցների համապատասխան բարձրագոյնը։ Թեմական դպրոցներն աւարտելով հարիւրաւոր աղջիկներ՝ իրենց բարձրագոյն կրթութեան համար դիմում են աշխարհական այլ բարձրագոյն դպրոցներ, իսկ հոգևոր բարձրագոյն դպրոցական հաստատութիւն նրանց համար մինչև այժմ գոյութիւն չունի, մինչդեռ այդպիսի հաստատութիւն աւելի քան անհրաժեշտ է։ Աստուածաբանական գիտութիւնները կանանց համար կարևոր են՝ քանի որ կանանքի մէջ նրանց միջոցով կարելի կըլինի աւելի նպաստել բարոյական կրթական գործին։ Մայրերն երեխաների դաստիարակիչներն են, իսկ կրօնական դաստիարակութիւնը ժամանակակից կեանքի առօրեայ հարցերից մէկն է։ Միւս կողմից այս խնդիրն ունի և իւր գործնական կողմը։ Կանանց թեմական դպրոցների դասատուների քանակը վերջերս խիստ սահմանափակուել է, քանի որ նոքա միշտ ձգտում են տեղափոխուել այլ դպրոցներ։ Իսկ կանանց բարձրագոյն դպրոցը կըտայ թեմական դպրոցներին հարկաւոր քանակութեամբ կին դասատուներ։ Այս ճեմարանը կըլինի Ռուսաստանում միակ հոգևոր բարձրագոյն դպրանոցը կանանց համար։ Առայժմ այդ ճեմարանի համար որոշուած է Սինոդի յատուկ միջոցներից տալ 17 հազար ռուբլի, իսկ պահպանութեան համար անհրաժեշտ կըլինի մինչև 46 հազար իւրաքանչիւր տարի։

Բարձրաստիճան հոգեւորականների ռոճկի եւ կենսաթոշակի խնդիրը։ Պետական Դումային է յանձնուած բարձրաստիճան հոգևորականների ռոճիկներն ու կենսաթոշակներն հաւասարեցնելու խնդիրը։ Թեմական և փոխանորդ եպիսկոպոսների պահպանութեան

համար նախատեսնուած է 200,768 ռուբլի, որից 178,578 ռուբլի 63 թեմական առաջնորդների պահպանութեան, իսկ 22,190 ռ. 14 փոխանորդ եպիսկոպոսների համար։ Ամենից շատ տրւում է Վարշաւայի թեմական առաջնորդին, որը համաձայն որոշուած նախահաշուի ստանում է 7,828 ռ.։ Այնուհետև 30 թեմերում (դրանց թւում և երեք մետրոպոլիտական թեմերը) ստանում են բարձրաստիճան հոգևորականները 4000-ական ռուբլի։ Սուխումի թեմում—3000 ռ. իսկ Օրենբուրգի թեմում 2,750 ռ. իսկ 30 թեմում էլ 1500-ական։ Իսկ մի քանի թեմական առաջնորդներ էլ ունեն յաւելումներ՝ Օրենբուրգինը—1,250 ռ. Պոդոլեան թեմինը—1000 ռ. Օրլովինը 1000 ռ.։ Առանձին գումարից ստանում է Վրաստանի էկզարխը—5,000 ռ. Իմերեթիայի եպիսկոպոսը—3000 ռ. Դօրբինը—3000 ռ. իսկ Ֆինլեանդիայի եպիսկոպոսը ստանում է 6000 ռ. Ֆինլեանդական իշխանութեան գումարից։ Սինոդի յատուկ գումարներից ստանում են 1000-ական ռուբլի իրրև յաւելումներ Վրաստանի էկզարխը, Պերմսկի և Պենզինսկի եպիսկոպոսները։

Փոխանորդ եպիսկոպոսները պահպանւում են մեծ մասամբ տեղական միջոցներով։

Նրանց ընդհանուր 78 թուից 14-ը ստանում են 3,578-ից մինչև 400 ռուբլի։ Վրաստանի թեմի փոխանորդ Դօրբի եպիսկոպոսը ստանում է առանձին գումարից 1500 ռ. վեց փոխանորդներ ստանում են Սինոդի յատուկ գումարներից 600—2000 ռ. 4-ը ունեն հոգևոր ճեմարանների վերատեսչի պաշտօնը։

Թեմական առաջնորդները՝ իբրև վանահայր այս կամ այն վանքի ստանում է եղբայրական մուտքի $^1/_3$-ը և $^1/_3$-ը կապալներից ստացած մուտքի։ Այս տեսակէտից նրանց ստացած գումարների քանակը հասնում է 450 ռ. մինչև 49,307 ռ. (Կիևի) իսկ փոխանորդներինը 418 մինչև 10,042 ռ. (Կիևի առաջին մասի փոխանորդը)։

Այսպիսով տեսնում ենք որ մեծ անհաւասարութիւն է տիրում ստացած ռոճիկների քանակի մէջ։ Ս. Սինոդին կից կազմուել է առանձին Յանձնաժողով մանրամասն վերաքննութեան ենթարկելու ռոճիկների հաւասարութեան խնդիրը։ Յանձնաժողովը եկել է այն եզրակացութեան, որ իւրաքանչիւր թեմական առաջնորդ չպէտք է համաձայն իւր դիրքի պակաս ստանայ 6000 ռուբլուց։ Յանձնաժողովը յայտնել է կարծիք՝ որ մետրոպոլիտները պէտք է ստանան բոլոր եկամտի աղբիւրները միասին ի նկատի առած 36 հազար ռ. գլխաւոր թեմերի առաջնորդները (Կազանի, Խարկովի, Լիտովայի, Վոլինսկի, Քիշնևի, Խերսոնի, Աստրախանի և Վրաստանի էկզարխը) 18 հազար, իսկ 12 հազար միւս տեղերինը։ Փոխանորդ եպիսկոպոսների ռոճիկները համաձայն յանձնաժողովի որոշման պէտք է լինի ամենաբիչը 3,000 ռուբլի։

Մենասատան կուսակրօնութիւն բնդունող ուսանողների համար։ Ս. Պետերբուրգի հոգևոր ճեմարանի վերատեսուչ Անաստասիյ եպիսկոպոսն Ս. Սինոդին միջնորդել է թոյլ տալ ճեմարանին կից կառուցանել առանձին մենաստան այն ուսանողների համար, որոնք ընդունում են կուսակրօնութիւն։ Այդ մենաստանի կառուցման համար վերատեսուչը խնդրում է վարկ բաց անել մինչև 100 հազար ռուբլի, հաշուի առնելով յատկացնել ամբողջ շինութիւնը 20 հոգու համար։ Ս. Սինոդը բացասում է այդ միջնորդութիւնը՝ պարզելով իր հայեացքը, որ չպէտք է կուսակրօն ուսանողների համար բարձր աստուածաբանական դպրոցին կից ստեղծել այդ տեսակ բացառիկ արտօնութիւններ, որոնցից զրկուած են միւս սովորական ուսանողները։ Սրբազան հայրերի կարծիքով կուսակրօն ուսանողը ճեմարանում պէտք է նոյն կեանքը վարի, ինչպէս մնացած բոլոր ուսանողները և չպէտք է դպրոցական նստարանից նրանց ընտելացնել փարթամութեան և կեանքի այլ և այլ յարմարութիւններին։

Եկեղեցական խմբական երգեցողութիւնը. Վերջին ժամանակներս Ռուսաստանում եկեղեցական երգեցողութիւնը լաւ հիմունքների վրայ դնելու մասին լուրջ կերպով խօսում է։ Անթիւ խմբապետներ զանազան կողմերից եկեղեցական երգերից՝ վեր են ածում ընդհանուր խմբականի կաթոլիկ եկեղեցական մուզիկայի օրինակով։ Եկեղեցական խմբապետներից շատերը ձգտում են տալ եկեղեցուն գեղարուեստական մուզիկա։ Դրեչանինի կարծիքով եկեղեցին պէտք է լինի մի մեծ անցք, որի միջոցով պէտք է ներս թափանցի ժողովրդի մէջ բարձր գեղարուեստի հոսանքը։ Երբ այնտեղ կըվերականգնի իսկական գեղարուեստը, ժողովուրդի գեղարուեստական ճաշակը կըզարգանայ և նա կըսովորի սիրել ճշմարիտ գեղարուեստական երգը, և այդ ճանապարհով կըգայ ժամանակ, գեղարուեստական մուզիկայի անհամեմատ նեղ շրջանը բաւականութիւն չի տալ նորան և նա կըզգայ պահանջ աւելի ընդլայնելու իր մուզիկայի աշխարհայեացքը։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Բողոքական եկեղեցու ծիսի բարեՆորոգութիւնները Ռուսաստանում։ Բողոքական եկեղեցու ծիսի բարեՆորոգութեան նախագիծը կազմուած և ներկայացուած է 1911 թ. Ներքին գործոց Նախարարին, որը պէտք է ներկայացնի Պետական Դումայի քննութեան։ Աւետարանական-Լուտերական հոգևորականութեան ապրուստը